

րենց ոչխարներուն, անոնց կաթը թէ՛ կը պահպանուի
և թէ՛ կ'առատանայ (Մար. հատ. Ա. էջ 418, Թ. 153):

բ) Ծաղկեալ դաշը (Field floridus). — 1322ի ուղե-
գիր ուխտաւոր Sir John Maundeville կը գրէ. «Բեթղե-
հէմ քաղաքի եւ Ս. Ծննդեան եկեղեցիին միջեւ կը
գտնուի Ծաղկեալ դաշը: Գեղեցիկ կոյս մը սխալմամբ
ամբաստանուած և չարախօսուած էր ծանր յանցան-
քով մը ու դատապարտուած՝ նոյն տեղւոյն վրայ այ-
րուելու: Երբ կրակը անոր շուրջ կը ճարակէր սկսաւ
Տիրոջը աղօթել, վասնզի ինք ստուգիւ յանցաւոր մը
չէր, այս գոհաբանութեամբ կը յուսար Անոր գիտցնել
և ամէնուն: Երբ կոյսը լմնցուց իր աղօթքը, մտաւ
կրակին մէջ որ անմիջապէս մարեցաւ: Այն խուրձերը
որ այրած էին՝ կարմիր վարդի թուփեր դարձան, իսկ
չայրածները՝ ճերմակ վարդի թուփեր, վարդերով լե-
ցուն: Ասոնք էին առաջին վարդերն ու վարդենինե-
րը: Այս կերպով կոյսը Աստուծոյ շնորհիւ ազատուած
էր, այնուհետեւ դաշտը կը կոչուէր Աստուծոյ ծաղ-
կեալ դաշտը, որուն համար վարդերով ծաղկազար-
դուած էր» (E. T. P. էջ 163–164):

ժ) Թեոսոսի վակֆիկ աւանդութիւնները. — Այս վան-
քը, ինչպէս նաև Մար–Սաբայինը կը նկատենք Բեթ-
ղեհէմի շրջակայքը: Թէոսոսի վանքը Բեթղեհէմէն
դէպի արևելք կէս ժամ է: Մոզերը այս վանքին ճա-
նապարհով վերադարձած են և հոն է որ զիշեր մը
հանգստացած են ըստ աւանդութեան, և տեղն ալ կը
կոչուի մոզերու այր: Սոյն վանքը շինուած է սարա-
հարթի մը վրայ որ ունի հրաշալի դիրք մը՝ ընդար-
ձակ տարածութեամբ: Անոր արաբերէն կրճատեալ ա-